



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն № 21-Լ

Հաշվառման սարքերի (ջրաչափ) փորձագիտական հետազոտության աշխատանքների կատարման կարգը հաստատելու մասին

« 19 » մայիսի 2020թ.

ք. Երևան

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման կանոնները սահմանելու մասին» 30 նոյեմբերի 2016թ. N 378-Ն որոշման՝ 2020 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած փոփոխությունները և ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել Խմելու ջրի առևտրային հաշվառքի սարքի (ջրաչափ) փորձագիտական հետազոտության աշխատանքների կատարման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Խմելու ջրի առևտրային հաշվառքի սարքի (ջրաչափ) ստուգաչափում իրականացնող ստորաբաժանումների ղեկավարներին՝ սույն հրամանը ծանոթացնել համապատասխան աշխատակիցներին ու պարզաբանել, որ այսուհետ պարտավոր են Խմելու ջրի առևտրային հաշվառքի սարքերի փորձագիտական հետազոտությունները կատարել հրամանով հաստատված կարգի համաձայն:
3. Ուժը կորցրած ճանաչել «Չափագիտության ազգային ինստիտուտ» և «Վեոլիա ջուր» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից «Ջրաչափերի փորձագիտական

հետազոտության աշխատանքների կատարման» 11.02.2019թ. համառոտ հաստատված կարգը՝ ընկերության հաստատման մասով:

4. Սույն հանձնարարականի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

Տնօրենի ժամանակավոր
պաշտոնակատար



Ա.ԱՂԱՅԱՆ

«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին»
փակ բաժնետիրական ընկերության տնօրենի
ժամանակավոր պաշտոնակատարի 2020 թվականի
մայիսի « 19 »-ի № 21-Լ հրամանի

ԿԱՐԳ

Խմելու ջրի առևտրային հաշվառքի սարքի (ջրաչափ) փորձագիտական հետազոտության աշխատանքների կատարման

- 1) «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» փակ բաժնետիրական ընկերությունը («Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ իրավահաջորդ, այսուհետ՝ Չափագիտական մարմին) փորձագիտական հետազոտության աշխատանքները կատարում է՝ համաձայն «Չափումների միասնականության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնները սահմանելու մասին» N 378-Ն որոշմամբ սահմանված «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման» կանոններով ամրագրված համապատասխան կարգավորումների:
- 2) Փորձաքննության ներկայացվող հաշվառքի սարքը պետք է ներկայացվի առևտրային հաշվառքի սարքի ապահովաքակցման ժամանակ մատակարարի կողմից կազմված արձանագրության հետ միասին՝ սահմանված կարգով փաթեթավորված վիճակում:
- 3) Ներկայացված ջրաչափը ապափաթեթավորումից հետո լուսանկարվում է: Փորձագիտական հետազոտությունը Չափագիտական մարմնի փորձագետը սկսում է արտաքին զննությամբ: Արտաքին զննության արդյունքների բավարար լինելու դեպքում որոշում է հաշվառման սարքի չափագիտական բնութագիրը՝ Չոտոմ (կենցաղային ջրաչափերի համար Չոտոմ ծախսի դեպքում սխալանքի թույլատրելի տիրույթը $\pm 2\%$ է) ծախսի դեպքում (այսուհետ՝ նախնական ստուգաչափում)՝ արձանագրելով արդյունքները և գրանցելով հայտնաբերված թերությունները:
- 4) Նախնական ստուգաչափման արդյունքները գրանցելուց հետո փորձագետը կազմատում է ջրաչափը և ստուգում նրա ներքին վիճակը:
- 5) Չափագիտության մարմնի փորձագետների կողմից արձանագրված բոլոր տվյալների հիման վրա կազմվում է եզրակացություն, ջրաչափի փորձագիտական հետազոտության արդյունքների վերաբերյալ (Հավելված 1): Հայտնաբերված տեսանելի թերությունները և խաթարումները լուսանկարվում են և պահպանվում եզրակացության հետ:
- 6) Ջրաչափի փորձագիտական հետազոտության արդյունքների վերաբերյալ եզրակացության.

1-ին կետում՝ արձանագրվում է ներկայացած ջրաչափի տեսակը, գործարանային համարը, ցուցմունքը, տեղադրման և նախորդ ստուգաչափման տարեթվերը (եթե հայտնի է), բաժանորդի տվյալները.

2-րդ կետում՝ արձանագրվում է արտաքին զննմամբ հայտնաբերված թերությունները (համաձայն հավելված 2-ի).

3-րդ կետում՝ արձանագրվում է ջրաչափի նախնական ստուգաչափման արդյունքում որոշված սխալանքի շեղումը թույլատրելի տիրույթից՝ Չոտո-ի դեպքում.

4-րդ կետում՝ արձանագրվում է ջրաչափի իրանի և համրման սարքի բացումից և կատարված վերլուծությունից հայտնաբերված անսարքություններն ու թերությունները.

5-րդ կետում՝ արձանագրվում է փորձագետի վերջնական որոշումը.

6-րդ կետում նշվում են որոշման հիմքերն ու պատճառները (համաձայն հավելված 2-ի).

7-րդ կետում /Ծանոթություններ/ - տրվում են լրացուցիչ տեղեկություններ և պարզաբանումներ ներկայացված հաշվառքի սարքի վերաբերյալ:

7) Ջրաչափի փորձագիտական հետազոտության արդյունքների վերաբերյալ եզրակացության 5-րդ կետը (փորձագետի որոշում) լրացվում է՝

ա. եթե եզրակացության 2-րդ և 4-րդ կետերում թերություններ և միջամտություններ չեն արձանագրվել և նախնական ստուգաչափմամբ ջրաչափի սխալանքի շեղումը գերազանցել է թույլատրելի տիրույթը, ապա եզրակացության 3-րդ կետում նշվում է շեղման տոկոսը և եզրակացության 5-րդ կետում նշվում է «Առևտրային հաշվառքի սարքի խախտում առանց արտաքին միջամտության»: Այս դեպքում եզրակացության 6-րդ կետը չի լրացվում:

բ. եթե եզրակացության 2-րդ և 4-րդ կետերում հայտնաբերված են թերություններ և խախտումներ, արձանագրվել է նախնական ստուգաչափմամբ ջրաչափի սխալանքի շեղումը որը գերազանցել է թույլատրելի տիրույթը, ապա եզրակացության 3-րդ կետում նշվում է շեղման տոկոսը և եզրակացության 5-րդ կետում նշվում է՝ «Առևտրային հաշվառքի սարքի խախտում արտաքին միջամտությամբ, որը կարող է հանգեցնել Առևտրային հաշվառքի սարքով փաստացի մատուցված ծառայության քանակից պակաս գրանցման»: , այս դեպքում լրացվում է եզրակացության 6-րդ կետը՝ նշելով խախտման պատճառներն ու հիմքերը, ըստ հավելված 2-ի 1 կետում արձանագրված խախտումների դեպքերի :

գ. Ջրաչափերի փորձագիտական հետազոտության աշխատանքների կատարման կարգի հավելված 2-ի 2-րդ կետում արձանագրված թերությունների և անսարքությունների դեպքում եզրակացության 5-րդ կետում նշվում է «Առևտրային հաշվառքի սարքի խախտում առանց արտաքին միջամտության» և 6-րդ կետում կախված անսարքության տեսակից, նշվում է հետևյալ որակումներից որևէ մեկը՝ «Շահագործման պայմանների անհամապատասխանություն», «Բնական մաշվածություն» և այլն:

Խմելու ջրի առևտրային հաշվառքի սարքի (ջրաչափի) փորձագիտական հետազոտության աշխատանքների կատարման կարգի

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N⁰ _____ 2020թ

«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ փորձագետ

Խմելու ջրի առևտրային հաշվառքի սարքի (ջրաչափի) փորձագիտական հետազոտության արդյունքների վերաբերյալ

Ամսաթիվ _____

1. Բաժանորդ _____
անուն ազգանուն հասցե, այլ տվյալներ

Ջրաչափի տեսակը	Գործ. N ⁰	Ցուցմունք	Նախորդ ստուգաչափման ամսաթիվը

2. Արտաքին զննմամբ հայտնաբերված թերությունները

3. Նախնական ստուգաչափման արդյունքներով ջրաչափի սխալանքի շեղումը թույլատրելի տիրույթից կազմում է _____

4. Ջրաչափի իրանի և համրման սարքի բացումից և կատարված վերլուծությունից հայտնաբերված անսարքությունները և թերությունները _____

5. Որոշում _____

6. Հիմքեր, պատճառներ _____

7. Ծանոթություն _____

Հաշվառման սարքը փորձաքննության ներկայացրեց՝

«Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման կանոնները սահմանելու մասին» 30 նոյեմբերի 2016թ. N 378-Ն որոշման 35-րդ կետի 1-ին ենթակետի համապատասխան արձանագրության հետ միասին՝ արձանագրության N⁰ _____»

Մատակարարի/ բաժանորդի (կամ ներկայացուցչի) կողմից

անուն ազգանուն

ստորագրություն

1 Առևտրային հաշվառքի սարքի առանձին մասի խափանումը կամ վնասումը արտաքին միջամտությամբ.

-արտաքին միջամտություն որակվում են այն դեպքերը, երբ փաստված է հաշվառքի սարքի առանձին դետալների խախտումները կամ դրանց վնասվածքները, կամ հաշվառքի սարքի կնիքների բացակայությունը /բացառությամբ դրանց բնական մաշվածության դեպքերի/, կամ դրանց կեղծված կամ վնասված լինելը, կամ առևտրային հաշվառքի սարքի բնականոն աշխատանքը խաթարող այլ ներգործությունները, որի արդյունքում կարող են խախտվել ջրաչափի չափագիտական ցուցանիշները՝ պատճառ հանդիսանալով ջրի քանակի սխալ հաշվառման, կամ անհնարին դրածնել չափագիտական ցուցանիշների ստուգումը:

- ջրաչափի համրման սարքի կոնսերվացված իրանը կոտրված է
- ջրաչափի համրման սարքի կոնսերվացված իրանը վնասված է
- ջրաչափի համրման սարքի կամ իրանի ներդիրը բացակայում է,
- ջրաչափի համրման սարքի ցուցիչ սլաքը/սլաքները/բացակայում է/բացակայում են/,
- ջրաչափի համրման սարքի ապակին ծակված է,
- ջրաչափի համրման սարքի ապակին կոտրված է,
- ջրաչափի համրման սարքի միացման օղակը բացված է
- ջրաչափի համրման սարքի միացման օղակը կոտրված է
- ջրաչափի համրման սարքի միացման օղակը դեֆորմացված է
- ջրաչափի համրման սարքի կոնսերվացումը բացված է
- ջրաչափի կոնսերվացումը բացված է,
- ջրաչափի համրման սարքը չի համապատասխանում տվյալ տրամագծին,
- ջրաչափի գործարանային համարը կեղծված է ,
- ջրաչափի գործարանային համարը ջնջված է,
- ջրաչափի թևանիվի վրա առկա են միջամտության հետքեր,
- ջրաչափի թևանիվը /թևանիվները/ կոտրված է /կոտրված են/,
- ջրաչափի համրման սարքի ցուցիչների վրա առկա են քերվածքի հետքեր,
- ջրաչափի համրման սարքի փականը /փականները/ բացված է /բացված են/,
- ջրաչափի համրման սարքի մեջ բացակայում է /բացակայում են/ դետալներ,
- ջրաչափի վերին ապակին բացակայում է,
- ջրաչափի ներքին ապակին բացակայում է,
- ջրաչափի իրանի հակամագնիսկան օղակը բացակայում է,
- ջրաչափի ՍՉԱՄ-ի կնիքը բացակայում է, առկա են միջամտության հետքեր ջրաչափի առանձին դետալների վրա,
- ջրաչափի ՍՉԱՄ-ի կնիքը կեղծված է, չի համապատասխանում ՍՉԱՄ-ի կնիքի նմուշին,
- ջրաչափի ՍՉԱՄ-ի կնիքի վրա առկա են միջամտության հետքեր /ՍՉԱՄ-ի կնիքը բացված- փակված է,
- ջրաչափի ՍՉԱՄ-ի կնիքի վրա առկա են միջամտության հետքեր /ՍՉԱՄ-ի կնիքը վնասված է,

- ջրաչափի ՍՉԱՄ-ի կնիքի լարը պոկված է, առկա են միջամտության հետքեր ջրաչափի ներքին դետալների վրա,
 - ջրաչափի ՍՉԱՄ-ի կնիքի տարեթիվը փոքր է քան , ջրաչափի թողարկման տարեթիվը,
 - ջրաչափի համրման սարքի ՍՉԱՄ-ի կնիքը բացակայում է,բայց իրանինը առկա է,
 - ջրաչափի համրման սարքի ՍՉԱՄ-ի կնիքը պոկված է,բայց իրանինը առկա է,
 - ջրաչափի համրման սարքի ՍՉԱՄ-ի կնիքը կեղծված է,բայց իրանինը նորմալ է,
 - ջրաչափի համրման սարքի կոնսերվացումը բացված է,բայց իրանի ՍՉԱՄ-ի կնիքը առկա է
 - ջրաչափի իրանի ՍՉԱՄ-ի կնիքը բացակայում է,բայց համրման սարքինը առկա է,
 - ջրաչափի իրանի ՍՉԱՄ-ի կնիքը պոկված է,բայց համրման սարքինը առկա է,
 - ջրաչափի իրանի ՍՉԱՄ-ի կնիքը կեղծված է,բայց համրման սարքինը նորմալ է,
 - ջրաչափի իրանի և համրման սարքի ՍՉԱՄ-ի կնիքները բացակայում են,
 - ջրաչափի իրանի և համրման սարքի ՍՉԱՄ-ի կնիքները պոկված են,
 - ջրաչափի իրանի և համրման սարքի ՍՉԱՄ-ի կնիքները կեղծված են,
- ջրաչափը ներկայացվել է առանց համրման սարքի,
 - ջրաչափը ներկայացվել է առանց իրանի,
 - ջրաչափը ներկայացվել է կազմատված,
 - ջրաչափի համրման սարքը չի համապատասխանում գործարանային հավաքմանը,
 - ջրաչափի համրման սարքի ապակին չի համապատասխանում գործարանային հավաքմանը,
 - ջրաչափի միացման օղակը չի համապատասխանում գործարանային հավաքմանը,
 - ջրաչափը և նրա մասերը տաքությունից դեֆորմացվել և խափանվել են,

2.Առևտրային հաշվառքի սարքի բնականոն աշխատանքի խաթարում առանց արտաքին միջամտության.

-շահագործման պայմանների խախտում – որակվում են դեպքերը, երբ փաստվում է ջրաչափերի հավաքակցման կամ ապահավաքակցման ժամանակ նորմերի խախտման հետևանքով առաջացած խախտումներ, ջրաչափերի հանման, պահպանման և տեղափոխման պայմանների խախտմամբ առաջացած խափանման կամ թերություններ:

-բնական մաշվածություն – որակվում են այն դեպքերը, երբ ջրաչափի երկարատև օգտագործումը հանգեցրել է նրա լրակազմում առկա դետալների բնական մաշվածության:

Տվյալ դեպքերը կարող են արտահայտվել հետևյալ տեսքով՝

- ջրաչափի ՍՉԱՄ-ի կնիքը բացակայում է, բայց ջրաչափի առանձին դետալների վրա միջամտության հետքեր չկան,
- ջրաչափի ՍՉԱՄ-ի կնիքի լարը պոկված է, բայց ջրաչափի առանձին դետալների վրա միջամտության հետքեր չկան,
- ջրաչափի միացման օղակը կոտրված է, բայց ջրաչափի առանձին դետալների վրա միջամտության հետքեր չկան
- ջրաչափի համրման սարքի կոնսերվացված իրանը վնասված է,

- ջրաչափի համրման սարքի ՍՉԱՄ-ի կնիքը բացակայում է,բայց իրանինը առկա է,
- ջրաչափի համրման սարքի ՍՉԱՄ-ի կնիքը պոկված է,բայց իրանինը առկա է,
- ջրաչափի համրման սարքի կոնսերվացվումը խախտված է,բայց իրանի ՍՉԱՄ-ի կնիքը առկա է,
- ջրաչափի իրանը կոռոզիայից քայքայվել է,
- ջրաչափի իրանի կնիքը բացակայում է,բայց համրման սարքինը առկա է,
- ջրաչափի իրանի և համրման սարքի ՍՉԱՄ-ի կնիքները պոկված են,
- ջրաչափի իրանի և համրման սարքի ՍՉԱՄ-ի կնիքները բացակայում են,
- ջրաչափը կոռոզիայից քայքայվել է,կազմատումն անհնար է
- ջրաչափը ցրտից կոտրվել է,որի հետևանքով ջրաչափը կազմատվել է,
- ջրաչափի իրանը դեֆորմացվել է՝ վնասելով միացման օղակը
- ջրաչափի իրանը դեֆորմացվել է՝ խախտելով կոնսերվացումը
- ջրաչափի իրանը դեֆորմացվել է առաջացնելով կազմատում
- ջրաչափի համրման սարքի ատամնանիվը կոտրված է,
- ջրաչափի համրման սարքի ատամնանիվները տեղից խախտվել են,
- ջրաչափի համրման սարքի ապակին կեղտոտվել է,
- ջրաչափի համրման սարքի ցուցիչները կեղտոտված են,
- ջրաչափի կազմատումից հայտնաբերված ցուցմունք,
- ջրաչափի միացման օղակը կոտրվել է երկարատև շահագործման կամ բնականոն մաշվածության հետևանքով,
- ջրաչափի միացման օղակը դեֆորմացվել է երկարատև շահագործման կամ բնականոն մաշվածության հետևանքով,
- ջրաչափի թևանիվը կոտրված է,
- ջրաչափի թևանիվը վնասված է,
- ջրաչափի թևանիվը մաշված է,
- ջրաչափի համրման սարքի ցուցիչները խախտվել են,
- ջրաչափի համրման սարքի ցուցիչների ատամները կոտրվել են,
- ջրաչափի իրանի առանցքային ձողը կոտրված է,
- ջրաչափի իրանի առանցքային ձողը մաշված է,
- ջրաչափի իրանի միջնապատը դեֆորմացված է,
- ջրաչափի թևանիվի առանցքակալը կոտրված է,
- ջրաչափի իրանի առանցքակալը մաշված է,
- ջրաչափը խցանված է,
- ջրաչափի համրման սարքի տեսողական ցուցիչ սլաքը /սլաքները/ տեղից խախտված է /խախտված են/,
- ջրաչափի համրման սարքի ապակին կոտրված է,
- ջրաչափի բնական մաշվածություն: